

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ե Կ Ա Կ Ն Գ - Ը Ն Մ Մ Կ Ա Կ Ն Գ

● Ուր. 1 Մարտ. — Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորեսոց Ս. Մարկոս Աւետարանչի եկեղեցւոյն մէջ, ժամարարն էր Հոգ. Տ. Տիրայր Վրդ. Տէրվիչեան: Քարոզեց Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչինեան, ընարան ունենալով «Յո՞՞ երթայց ես ի հոգւոյ քումմէ, կամ յերեսաց քոց ես յո՞՞ վախեայց» (Սաղմ. ձԼԸ. 7): Ս. Պատարագէն ետք, Միաբանութիւնը պատուաբերուեցաւ Ասորեսոց Հոգ. Տեաչէն, Հանդիսաւոր երթուղարձին նախագահեց Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան:

● Եր. 2 Մարտ. — Ըստ սովորութեան, երեկոյեան ժամերգութեան ընթացքին կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի խորաններուն և զլիսաւոր սրբանկարներուն վարագուրումը:

● Կիր. 3 Մարտ. — Բուն բարեկենդան: Փակեալ խորանի Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: ժամարարն էր Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան: Դպրապետի պաշտօնը կը վարէր Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արրահամեան: Քարոզեց Հոգ. Տ. Կիրեղ Վրդ. Գարիկեան, խօսելով Մեծ Պահօթի նշանակութեան շուրջ:

● Դչ. 6 Մարտ. — Սկիզբ կարգաց Մեծ պահոց: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Վերահագաձի առաջին ժամերգութիւնը:

● Եչ. 7 Մարտ. — Իրիկուան ժամը 7ին, Ս. Յակոբեանց Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ պահոց եկեղեցէի առաջին ժամերգութիւնը, որուն նախագահեց Գեր. Տեղապահ Ս. Հայրը և քարոզեց, պարզելով բուն իմաստը ապաշխարութեան, որ կը նշանակէ միտքը փոխել. զգուշացուց ներկաները նիւթապաշտութեան մոլութենէն, որուն հաւատարապէս ենթակայ են հարուստն ու աղքատը:

● Ուր. 8 Մարտ. — Վաղուան նախաւանակը պաշտուեցաւ ի Ս. Թորոս (Գրչազրաց Մատենադարան Ս. Աթոռոյ): Հանդիսապետն էր Գեր. Տ. Ենորճ Եպս. Գալուստեան:

● Եր. 9 Մարտ. — Ս. Թէոդորոսի զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Թէոդորոս եկեղեցւոյ մէջ: ժամարարն էր Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան:

— Կէսօրէ վերջ, վաղուան Արտաքսման Կիրակիի առթիւ, Միաբանութիւնը, զլիսաւորութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր, շէրաշափառնով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցաւ վաղուան նախաւանակը մեր վերնամասերն մէջ: Ապա կատարուեցան Տնօրնական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան:

● Կիր. 10 Մարտ. — Արսախման: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան:

Թիւն, մեր վերնամասերն մէջ: ժամարարն էր Հոգ. Տ. Յովակիմ Արդ. Մամուր: Ս. Պատարագէն ետք, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր, կատարուեցաւ երրորդ անգամ մեծանշան թափօր՝ Գրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղադր շուրջ:

● Եչ. 14 Մարտ. — Իրիկուան եկեղեցէի կարգին, Մայր Տաճարին մէջ քարոզեց Գեր. պատիւ Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, անդրադառնալով պահօթի և անոր օգուտներուն վրայ:

● Եր. 16 Մարտ. — Ս. Կիւրղի Երուսղիմայ նայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիւրղի սեղանին վրայ: Պատարագեց Հոգ. Տ. Հայկապետ Վրդ. Պայրամեան:


● Կիր. 17 Մարտ. — Անուակին: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ ժամարարն էր Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան: Քարոզեց Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գալարահեան, ընարան ունենալով «Մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ», (Սաղմ. ԽԸ. 21), ու անդրադարձաւ Անուակի Որդիի առակին մասին, ցոյց տալով անհնազանդութիւնը իրրեւ ծանրագոյն մեղքերէն մին՝ զոր գործեց նաեւ մեր նախահայրը՝ Ադամ:

● Եչ. 21 Մարտ. — Իրիկուան եկեղեցէի կարգին նախագահեց և քարոզեց Գեր. Տ. Հայկազուն Եպս. Արրահամեան, ընարան ունենալով «Ես եմ, մի՛ երկնչիք» (Մարկ. Զ. 50), խօսելով վախի զգացումին վրայ, կրօնական հայեցակետով. ու եզրակացուց թէ վախը արդիւնքն է մեղքին ու յանցապարտութեան: Ադամ այն տանն միայն վախացաւ Տիրոջմէ, երբ մեղանչելով անհնազանդ գտնուեցաւ Անոր պատուէրին զէմ: Ճշմարտ քրիստոնեան վախի զգացում չէ որ կ'ունենայ Աստուծոյ նկատմամբ՝ այլ սիրոյ, ինչպէս հնազանդ մանուկներ՝ իրենց ծնողաց հանդէպ: Վախը նշան է նաև թերահաւատութեան:

● Կիր. 24 Մարտ. — Տնտեսին: Փակեալ խորանի Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: ժամարարն էր Հոգ. Տ. Միւռն Վրդ. Կրեկիեան: Քարոզեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, անդրադառնալով Տնտեսի աւետարանական առակին:

● Եչ. 28 Մարտ. — Իրիկուան եկեղեցէի կարգին ի Ս. Յակոբ քարոզեց Գեր. Տ. Ենորճ Եպս. Գալուստեան, ընարան ունենալով թղթնիի առակին «Տէր, թող զգա այս ամ ևս» (Ղուկ. ԺԳ. 8). շեշտեց հոգևոր մարդին մէջ մեզի ներկայացած պատենութիւններէն օգուտելու կարեւորութիւնը. ու ցոյց տուաւ Մեծ պահօթը իրրեւ բոլորիս ներկայացող կրօնական վերելքի պատենութիւն մը:

● Եր. 30 Մարտ. — Ս. Բառասուն մանկանցն Սեբասիոյ: Ս. Աթոռոյս նորընտիր Լուսարարապետ Գեր. Տ. Ենորճ Եպս. Գալուստեան քահանայական Ս. Պատարագ մատուց Մայր Տաճարի Ս. Գլխազրի մասերն մէջ, որմէ ետք կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտամունք՝ Ս. Աթոռոյս բոլոր հանգուցեալ Լուսարարապետաց հօգիններուն համար, Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ:



— Կէսօրէ վերջ, վաղուան Գատարի Կիրակի առթիւ, ընտրեալ Ամեն. Ս. Գատրիարք Զօր զխաւորութեամբ, Միաբանութիւնը « Էջաշա-
փառնոյ մուտք գործեց Ս. Յարութեան Տանար, ուր պաշտուեցաւ վաղուան նախատնակը՝ հա-
յայտական Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ. Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց
այցելութեան հանդիսաւոր թափօր Տանարէն
ներս. Թատարայեան էր Լոգ. Տ. Միւսոն Վրդ.
Կրճիկեան:

● Կիր. 31 Մարտ. — Դասաւորին: Գիշերային
և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան
ի Ս. Լուսաւորիչ: Ապա, ընտրեալ Գատրիարք
Ամեն. Տ. Տիրան Արքեպ. ներսոյեան մատոյց
որուան հանդիսաւոր Ս. Գատարազը Քրիստոսի
Ս. Գերեզմանին վրայ և քարոզեց, ժանրանալով
որուան ձայն Աւետարանէն շարքայութիւն
Աստուծոյ ի ներքս ի ձեզ է. խօսքին վրայ և Ս.
Գատարազէն ետք նախագանց Քրիստոսի Ս. Գե-
րեզմանին և Գատանտեղւոյն շուրջ կատարուած
երբազարձ մեծանդէս թափօրին: Իրեն կրտսե-
աւորիչին Լոգ. Տ. Տ. Ջաւէն և Վարժապետ վար-
դայեաններ: Ս. Գատարազի երգեցողութիւնները
կատարուեցան երկեսն երգչախումբի կողմէ:

● Ել. 14 Մարտ. — Կ. ա. ժամը 11.30ին,
Յունաց Ամեն. Տ. Գեներալիտոս Ա. Գատրիարքը,
հանդերձ Միաբանութեամբ, իր առաջին պաշտո-
նական այցելութիւնը տուաւ Գատրիարքարանիս
և ընդունուեցաւ Գեր. Տեղապահ Ս. Զօր և ը-
փանդակ Միաբանութեան կողմէ. Կէս ժամ տեղ
սիրալիբ տեսակցութիւն ձր տեղի ունեցաւ և
լուսանկարուեցան:

● Դչ. 26 Մարտ. — Գեր. Տ. Հմայեակ Ծ. Վրդ.
Ինզոյեան օղային զժող մեկնեցաւ Ամերիկա, իր
ըն. նուիրակ Ս. Աթոռոյ: Իր տեղ Ս. Աթոռոյ
առժամեայ Մատակարար նշանակուեցաւ Լոգ. Տ.
Հայկասեր Վրդ. Գայրամեան:

Մարտ 21էն Ապրիլ 6, նորին Ամենապա-
տութեան Գատրիարք ընտրութեան առթիւ նոր-
հասորութեան եկան. — Անկլիթան Եպիսկոպո-
սարանի կողմէ Հայր Էլփրի: ձերմակ Հայրերու
վանահայր: Վսեմ. Բաղաքայեալը իր կազմով
Վսեմ. Բէմի Արէքթաթ՝ Երեսօթխան Երուսաղէմի
և Երիջով նահանգի: Պր. Վիլյարտ ձուս: Ամերիկ-
եան երեք փոխ Հիւպատոսները: Յոյն Կաթոլիկ
Գատրիարքարանի փոխանորդը: Նազովրեցի Հայ
Աւետ. Եկեղեցւոյ պատուելի Անուշաւան Էրէ-



Յունաց Պատրիարքի այցելութիւնը Հայոց Անտալիա Պատրիարքին:

Իմրափարն էր Լոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկ-
եան: Վանք վերադարձին, Միաբանութիւնը «Որ
պատուիրան» շարականը երգելով բարձրացաւ
Գատրիարքարան:

Պ Ա Ն Տ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Բ

● Դչ. 6 Մարտ. — Կէսօրէ առաջ, Գեր. Տե-
ղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Լոգ. Տ.
Հայկասեր Վրդ. Գայրամեանի և Տիար Կարպիս
Հինդլեանի, փոխ այցելութիւն տուաւ քաղաքիս
Բրիտանական Նոր Հիւպատոս Mr. Stewartի:

● Բչ. 11 Մարտ. — Բաղաքիս սկնարութա-
րանի անօրինութեան հրաւերին ընդառաջելով,
իրենց կողմէ տրուած թէյասեղանին ներկայ եղան
Գեր. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Հազարեան և Տիար
Կարպիս Հինդլեան:

ճեան և պատուելի Եսայի Սթանպուլեան: Յու-
նաց Ամեն. Գեներալիտոս Ա. Գատրիարքը, Եպի-
սկոպոսներով և վարդապետներով. նախին Երես-
փոխան Պր. Անթոն Ա. Աթալլա և ձողէֆ Ն. Ապ-
տո: Ռատիսկայանի պաշտոնեայ Պր. ձափառ ձու-
տէն: Մարտնիթ համայնքի Եպիսկոպոս Գեր. Իլիաս
Զիատէ, Երուսաղէմի և Սրբատեղեաց Կառավար-
չի փոխանորդ Լուծֆի Էֆ. Մուղլապի: Պրնչք.
ձափար Նապուլթի, Ռաճայ Խաշաման, ձորճ
Մուխրան (Լիբանանէն), Միքայել Ստեփան,
Քամիլ Նասսար և Նուպար Նոխսուտեան (Լիբա-
նանէն): Գանատարանակ Տեարք Արիս Լ. Ալէք-
սանեան և Աւետիս Մ. Օղանեան: Պրնչք. Յ. Մե-
լիքեան և Յ. Մերունեան. Ֆրանչիսկեանց Միա-
բանութիւնը՝ զխաւորութեամբ Գեր. Գրիսթո-
տին: Աստուածաշունչի Հրատարակչական Կազ-
մակերպութեան Տնօրէնը և Պր. Մ. Սիրականեան: